

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար՝ Գագիկ Ալոյանը

Հաստատվել է համայնքի ավագանու 27.12.2016 թիվ 39 –Ն որոշմամբ.

2017թ.

Գետափ գյուղը գտնվում է Վայոց Ձորի մարզի տարածքում : Գյուղը հիմնադրվել է 1828թ-ին Պարսկաստանի Սալմաստ գավառի Խոյ գյուղից գաղթած հայերի կողմից: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1000-1300մ բարձրության վրա, շրջապատված է լեռներով, գյուղի միջով հոսում է Եղեգիս գետը: Գյուղը գտնվում է Երևան- Մեղրի մայրուղու վրա: Վարչական տարածքը կազմում է 2000հա: Մարզկենտրոնից հեռավորությունը կազմում է 3կմ, Երևանից 120կմ:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

Գյուղում ապրում են 2407բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 51%-ը:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է

- 1.Երեխաներ 0-6 տարեկան 133մարդ
- 2.Դպրոցականներ 7-017 տարեկան 235մարդ
- 3.18-62 տարեկան 1882 մարդ
4. Թոշակառուներ 265 մարդ
- 5.Հաշմանդամներ 108մարդ
- 6.Աշխատունակ 1774 մարդ
7. Միակողմանի ծնողազուրկ 21 երեխա

Գյուղն ունի 785 ծուխ, որից 85 ընդգրկված է <<Փարոս>> համակարգում :

Համայնքը ապահովված է մշտական խմելու ջրով: Ռոտզման ցանցը ապահովված է 90%-ով: Համայնքը ունի բարեկարգ և գույքով ապահովված մշակույթի տուն, մշտապես տարբեր խմբակներում զբաղվում են մոտ 160 երեխա: Վերանորոգումից հետո 2016թ-ից գործում է համայնքի մանկապարտեզը , որը հազեցված է բարձրակարգ գույքով:

Այժմ մանկապարտեզ են հաճախում 60/վաթսուն/ երեխաներ և անհրաժեշտություն կա ավելացնել 2-րդ հարկի գույքը ևս

30/երեսուն/ երեխա ընդգրկելու մանկապարտեզում:

Այսօրվա դրությամբ Գետափ համայնքի ընտանիքների 60%-ը գազի բաժանորդներ են համարվում, իսկ 40%-ը պոտենցիալ բաժանորդներ՝ գազաֆիկացման տեսանկյունից: 2015թ-ին ամբողջ համայնքը գազաֆիկացվեց, սակայն առկա են տներ, որոնք ոչ պլանային զարգացման պատճառով գտնվում են գազատարներից հեռու:

Համայնքի գերակա խնդիրներից է ներհամայնքային ճանապարհները, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 97կմ, իսկ կենտրոնական փողոցները 11կմ: Յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեի միջոցով տարբեր փողոցներում կատարում ենք բարեկարգման աշխատանքներ, սակայն այն երկար չի ծառայում, որովհետև չի ասվալտապատվում: Ներկա գլխավոր խնդիրը գյուղի կենտրոնական փողոցի ասվալտապատումն է, որը սկսում է գյուղի մուտքից մինչև մանկապարտեզ մոտավորապես 2.5կմ երկարությամբ:

Համայնքի գերակա ուղղություններից է նաև պտղաբուծությունը, բուսաբուծությունը և անասնապահությունը: Համայնքը ապահոված է գյուղատնտեսական բոլոր տեխնիկաներով, բացի հացահատիկահավաք կոմբայնից, որի առկայության դեպքում նշված մթերքների ինքնարժեքը կիջնի և կավելանա ցանքատարածությունները:

Գարնան վարարումների ժամանակ լուրջ խնդիր է առաջացնում Եղեգիս գետը: Անհրաժեշտ է կատարել ափերի ամրացում գաբիոնային շարվածքով:

Համայնքի միջնակարգ դպրոցը խիստ վթարային վիճակում է անհրաժեշտություն կա կապիտալ վերանորոգելու:

ՍՈՅԻՍԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՔԱՍԿ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն		53088.9	
Ընդհանուր եկամուտների մեջ սեփական եկամուտների բաժինը	16%	8332.7	
Համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկություններ և արտադրանքի սպարձան շուկաները	<<Վեդի Ակիո>> <<Մալիո Տարակո>> Հացի արտադրամաս	Հայաստան, Ռուսաստան, Շվեդիա, Հայաստան, Արտասահման Վայոց Ձոր	60տ 1342տ 250տ
Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծախսները, հիմնական սպարձան շուկաները	Պտուղ - բանջարեղեն և հացահատիկ	Երևան Մարզեր	
Զբոսաշրջակային հետաքրքրություններ ներկայացնող պատմական մշակութային հուշարձաններ			
Դպրոցական, նախադպրոցական, արտադրական հաստատություններ և բուհեր	Մանկապարտեզ	Միջնակարգ դպրոց	
Առողջապահության հաստատություններ	Բուժ. կետ		
Շտանեկան նպատակների համակարգում գրանցվածներ	85 ընտանիք		

հ/հ	էկամուտներ	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
		գնատապի	կանխատեսված	կանխատեսված	կանխատեսված	կանխատեսված
	Շրջաններ էկամուտներ	80705.8	53400	55811.7	68586.7	70996.7
Ա	Հարցալին էկամուտներ	6939	7100	7420	7690	7900
1	Հողի հարկ	2750	2800	2820	2890	2900
2	Գույքահարկ	4189	4300	4600	4800	5000
Բ	Տեղական սույրբեր	429	429	429	429	429
Գ	Այլ էկամուտներ	967.7	967.7	967.7	967.7	967.7
1	Հողի վարձավճար	367.7	367.7	367.7	367.7	367.7
2	Պետ պատվիրակված լիազորությունների իրականացման համար ստացվող սիջոցներ					
3	Իրավական ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային էկամուտներ	600	600	600	600	600
Դ	Պտտացիա	44756.2	47795.0	49795.0	52000	54000
Ե	Տարեկան տրամադրվող մնացորդ	27614	7108.3	7200	7500	7700

Համայնքի երկու գերեզմանոցները հիմնականում փակ են, նախկինում 5 հա տարածք է հատկացված նոր գերեզմանատեղի համար, սակայն չկա մոտեցման ճանապարհ: Պլանավորվում է այն իրականացնել համայնքի խնայողությունների հաշվին:

Համայնքի տարածքում նախատեսվող /շարունակվող/ հանրապետական, մարզային միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր և միջոցառումներ:

1. Պետության կողմից նախագծա- նախահաճվային փաստաթղթերը կազմելուց հետո , որը կազմում է 140մլն. դրամ իրականացվել է 20 մլն. 2015թ-ին և շարունակվելու է հաջորդ տարիներին, բարեկարգելու համայնքի մուտքից միջև մանկապարտեզ ընկած ճանապարհը:
2. Գյուղական համայնքների զարգացման ծրագրի կողմից 2016թ-ին վերանորոգվել է համայնքի ոռոգման ցանցը, երկու տարբեր հատվածներում և նախատեսվում է ևս 70 մլն. -ի աշխատանքներ ոռոգման ներտնտեսային մնացած ցանցերը վերանորոգելու:
3. Նախատեսվում է հաջորդ 5 տարիներին շարունակել Շատին, Եղեգիս, Հորբատեղ, Գողթանիկ, Վարդահովիտ, Սալլի, Հորս, Հերմոն, Թառաթումբ համայնքների հողի և գույքի բազաների սպասարկումը:
4. Սոց ներդրումների հիմնադրամի օգնությամբ ձեռք է բերվել մանկապարտեզի երեսուն երեխաների համար գույք:
5. Տեղական միջոցների խնայողությամբ կառուցել նոր գերեզմանոց տանող ճանապարհը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ
ԳՈՐԾՈՆՆԵՐ

Համայնքի սոցիալ տնտեսական զարգացման խոչընդոտներից առաջնահերթը դա ֆինանսական միջոցների սղությունն է, ճիշտ է մենք կատարել ենք հաստիքների կրճատում, ամեն տարի ավելացրել ենք սեփական եկամուտները, մինչև մանկապարտեզի գործարկումը մեր միջոցներով կատարվել է մոտ 90մլն-ի համաֆինանսավորում և ներդրումային աշխատանքներ, սակայն մանկապարտեզի գործարկումից հետո , որը տարեկան տանում է մոտ 20-22մլն. դրամ, առաջացնում է բավական դժվարություն որևէ խնդիր լուծելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԸՍՏ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ

1. Համայնքի ներքին ճանապարհների բարեկարգում

Արդեն իսկ առկա է գլխավոր փողոցի ասֆալտապատման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, այն պետք է իրականացվի կառավարության կողմից տրամադրվող գումարներով:

2. Գյուղատնտեսության զարգացման գլխավոր խոչընդոտը

Ա/ Բնական արհավիրքներ/ ցրտահարություն, կարկուտ/

Բ/ Բարձրորակ սերմացուի պակաս

Գ/ Հացահատիկահավաք կոմբայնի բացակայությունը

Դ/ Բարձր ինքնարժեք

3. Մանկապարտեզի կահավորում

Կա պայմանավորվածություն /Գյուղական համայնքների զարգացման/ ծրագրի հետ, խոչընդոտներ չկան:

4. Գերեզմանոցի ճանապարհի կառուցում:

Սեփական եկամուտների խնայողության միջոցներով: Կիրականացվի նշված ծրագիրը խոչընդոտներ չկան:

ԳԱԶԱՏԻԿԱՑՄԱՆ ԱՎԱՐՏԸ

5. Մնացել է թեթև աշխատանքներ, որը կիրականացվի համայնքի կողմից:

6. Եղեգիս գետի հունի ամրացում :

7. Միջնակարգ դպրոցի վերանորոգում:

Գլխավոր խոչընդոտը ֆինանսական միջոցների բացակայությունն է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքը գտնվում է Երևան- Մեղրի մայրուղու վրա, համայնքը ունի մեծ աշխատուժի առկայություն, մոտ 100 հոգի բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտներ, համայնքի տարածքում գործում է <<Գետափի գինու գործարանը>> , որտեղ աշխատում են մոտ 150 բնակիչներ և <<Մասիս Տարակոյի>> ծխախոտի չորացման կայանը, որտեղ աշխատում են մոտ 30 մարդ:

Գյուղատնտեսությունը լինելով համայնքի զարգացման գլխավոր ուղղություններից մեկը, չի բարձրացնում ժողովրդի կենսամակարդակը և կատարվում է երիտասարդ ընտանիքների արտահոսք:

Համայնքի թույլ կողմերն են՝ աշխատատեղերի պակասը, սոցիալապես անապահով ընտանիքների թվաքանակի ավելացումը:

ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Գործող կազմակերպությունների աշխատատեղերի ավելացում:
2. Միջազգային կազմակերպությունների կողմից ներդրումային ծրագրերի շարունակական աճ:
3. Համագործակցության շրջանակների ընդլայնում

Սպառնալիքներ`

1. Համայնքից հեռացողների թվի աճ:
2. Սոցիալ տնտեսական իրավիճակի վատացում:
3. Բնական աղետների շարունակական բնույթը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ապագայում համայնքի տեսլականն է ունենալ բարեկարգ փողոցներ, մեծ թվով աշխատատեղերի բացում արդյունաբերական ձեռնարկություններում, արտագաղթի բացակայության և կազմված առաջնահերթ ծրագրերի իրականացում ըստ հերթականության , որոնք շարադրված են հաջորդ էջերում:

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ,
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

Համայնքի ներքին ճանապարհների բարեկարգում

Ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 97կմ ,որից 11կմ կենտրոնական ճանապարհն է :Համայնքի համար շատ կարևոր կենսական նշանակություն ունի փողոցների լուսավորությունը : Համայնքի ուժերով լուսավորություն է անցկացվել մոտ 4կմ. Եղեգնաձորյան խճուղի, թիվ 19,թիվ 18 փողոցներում, որոնք համարվում են կենտրոնական փողոցներ, սակայն չունենք նշված փողոցների բարեկարգում, ուստի անհրաժեշտ է ասֆալտապատել թիվ 19, թիվ 17 փողոցները սկսած գյուղի մուտքից՝ մոտավորապես 2,5կմ երկարությամբ, որը հասնում է համայնքի նորարաց մանկապարտեզի դուռը: Այդ ուղղությամբ 2015թ-ի կառավարության կողմից կազմվեց նախագիծ և նախահաշիվ իրականացվեց մոտ 20 միլիոնի աշխատանք, իսկ մնացած 120միլիոնը պետք է կատարվեր 2016թ-ին, սակայն մինչև օրս այն չի իրականացվել: Նշված աշխատանքների իրականացման համար ուսումնասիրություն է կատարվել նաև Համաշխարհային բանկի կողմից : Միաժամանակ բարեկարգվել է /լուսավորություն, խճապատում/համայնքի մնացած փողոցները: Ուշադրության կենտրոնում է հանդամիջյան ճանապարհների բարեկարգման աշխատանքները, ներկա անհարմար վիճակը լրացուցիչ դժվարություններ են ստեղծում սեփականատերերի կողմից իրենց հատկացված հողամասերում անհրաժեշտ տեխնիկա մտցնելու և այն ռացիոնալ մշակելու համար:

ԾՐԱԳԻՐ 2

Գյուղատնտեսություն

Համայնքի գերակա ուղղություններն են պտղաբուծությունը, բուսաբուծությունը և անասնապահությունը: Համայնքը գտնվում ծովի մակարդակից 1300ք/մ բարձրության վրա, ընդհանուր վարչական տարածքը կազմում է մոտավորապես 2000քառակուսի

կիլոմետր, զարգացած է բուսաբուծությունը և անասնապահությունը : Ոռոգելի է 300հա տարածություն վրա բնակիչները զբաղվում են բանջար-բոստանային կուլտուրաներով , միաժամանակ արտադրվում է ցորեն և գարի: Համայնքը ապահովված է գյուղատնտեսական տեխնիկայով, բացի հացահատիկահավաք կոմբայնից, որը սեզոնի ընթացքում առաջացնում է բնակիչների հիասթափությունը, ցորենի և գարու ինքնարժեքի թանկացման պատճառով : Անհրաժեշտություն է համարվում դիմել համապատասխան գերատեսչություններին և կառավարությանը աջակցելու

հացահատիկահավաք կոմբայն ձեռք բերելու համար: Համայնքում առկա է 700զլուխ խոշոր եղջերավոր անասուններ, որոնցից ստացված կաթը տնայնագործական եղանակով է մշակվում: Ֆերմերային տնտեսությունների կողմից անասնապահությունը որպես բիզնես ընկալելու համար առաջնահերթություն է առաջացել համայնքում ունենալ կաթի ընդունման և սառեցման կետ, որը հնարավորություն կնձեռնի ֆերմերների կողմից արտադրված կաթի ավելցուկը վաճառել մթերոլ կազմակերպությանը: Առաջնահերթություն է համարվում համայնքում ինտենսիվ այգիների հիմնումը , որը հնարավոր է իրականացնել միայն սուբսիդավորված գումարների և ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրման միջոցով /մոտավորապես 30 հա/:

ԾՐԱԳԻՐ 3

Համայնքի մանկապարտեզի կահավորում

2016թ-ի ապրիլից վերագործարկվել է համայնքի մանկապարտեզը Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից և համայնքի կողմից մոտ 8 միլիոն դրամ ներդրում կատարելուց հետո: Այժմ մանկապարտեզ է հաճախում մոտ 60 /վաթսուն/ երեխա : Մանկապարտեզում հնարավորություն կա սաների թիվը հասցնելու մոտ 120-ի, սակայն ունենք գույքի պակաս : Այժմ պայմանավորվածություն է ձեռք բերվել տարածքային զարգացման հիմնադրամի հետ մանկապարտեզի 2-րդ հարկի գույքը համայնքին տրամադրելու: Արդյունքում ևս 60 ծնողներ հնարավորություն կունենան աշխատելու:

ԾՐԱԳԻՐ 4

Համայնքի նոր գերեզմանոցի ճանապարհի կառուցում

Գյուղի հիմնադրման օրվանից համայնքում առկա է թիվ 1 և հետագայում թիվ 2 գերեզմանոցները: Այժմ թիվ 1 գերեզմանոցը ընդհանրապես փակ է, իսկ թիվ 2-ը մասնակի կիսաբաց: Համայնքի կողմից հատկացվել է տարածք մոտ 5 հա գերեզմանոց հիմնելու, սակայն չկա մոտեցման ճանապարհ, առկա է նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, որը մոտավորապես կազմում է 30 միլիոն դրամ: Համայնքը նախատեսում է առաջիկա հինգ տարիների ընթացքում սեփական եկամուտների հաշվին կառուցել նոր գերեզմանոց գնացող ճանապարհը: Արդյունքում կունենանք կանոնակարգված շահագործման գերեզմանոց:

ԾՐԱԳԻՐ 7

Համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում

Գետափի դպրոցը կառուցվել է 1973թ-ին, իսկ 2004թ-ին վերանորոգվել է տանիքը: Դպրոցը գտնվում է Եղեգիս գետի հարակից տարածքում, մշտապես առկա են գրունտային ջրեր, մասնավորապես զարնանային հեղեղումների ժամանակ: Տարիների ընթացքում առաջացել են կոնստրուկտիվ ճաքեր և նստվածքներ, որոնց հետևանքով շենքը համայնքի կողմից դիտարկվում է որպես սեսմիկ վտանգավոր շինություն: Խնդրվում է կառավարությանը շենքի հիմնանորոգումը ներառել առաջիկա ծրագրերի մեջ:

ԾՐԱԳԻՐ 8

Աջակցել համայնքում իրականացվելիք ներդրումային ծրագրերին:

1. Համայնքի համար գերակա ճյուղ ճանաչել գյուղատնտեսությունը, ստեղծել բարենպաստ պայմաններ այն զարգացնելու:
2. Համայնքում գործող խոշոր կազմակերպություններին ներգրավվել համայնքային բիզնեսի ոլորտում:
3. Հետևողական լինել համայնքի սանիտարական վիճակին, բարելավվել աղբահանության հետ կապված ծառայությունները, ավելի մաքուր և կանաչապատ համայնք ունենալու համար:
4. Համագործակցել դոնոր կազմակերպությունների հետ համայնքում ջերմոցային և սառնարանային տնտեսություններ , անասնապահական և թռչնաբուծական ֆերմաներ ստեղծելու համար, տնտեսվարողների հետ կանոնակարգել դաշտը:

ԾՐԱԳԻՐ 9

Հյուրանոցային տնտեսության կառուցում և

շուկայի տաղավարներ տեղադրում

Նախատեսվող տարածքը գտնվում է Գետափ համայնքի Երևանյան խճուղի թիվ 1 հասցեում, որտեղով անցնում է Երևան- Մեղրի, Եղեգնաձոր- Մարտունի ճանապարհը:

Ծրագիրը ոչ միայն նախատեսված է Գետափ համայնքի այլ նաև շրջակա գյուղերի համար: Մարդիկ հնարավորություն կունենան իրենց գյուղատնտեսական ապրանքները ավելի հեշտ և կենտրոնացված վայրում վաճառելու: Ծրագիրը կազմում է 38 մլն., որից 30 մլն.-ը ակնկալվում է վարկավորման տեսքով ստանալու կառավարությունից, իսկ մնացած 8 մլն.-ը կներդրվի մասնավորի կողմից, որը նաև ընդհանուր կառուցապատման աշխատանքների համար ծախսել է 50 մլն. դրամ:

Ծրագիրը իրականացնելուց հետո առաջին տարում կստեղծվի մոտ 23 աշխատատեղ, իսկ հաջորդ տարիներին 35 և ավելի:

ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Նշված ծրագրերը և կատարվող աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք ուղղված են բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Նախատեսվում է մոնիթորինգը իրականացնել ցանկացած աշխատանք կամ ծրագիր իրականացնելուց հետո: Հասկանալով ծրագրի օգուտները և սխալները, որպեսզի հաջորդ ծրագրերի իրականացման ժամանակ կատարենք համապատասխան փոփոխություններ:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները:

1. Ծրագրի օգուտներ և արդյունքները:
2. Ներգրավված բնակիչների թիվը:

Կատարված մոնիթորինգները կամփոփվեն համայնքի տարեկան ընդհանուր ժողովում, որը կնպաստի նաև վեր հանելու համայնքի հետագա կարիքները: